

ՄԱՐԴԻԿԱՆ ԽԱՌԵՆՈՒԱԾՔԸ ԵՒ ՆԵԱՐԴԵՐԸ

(Մի հասուած իմ անտիպ աշխատութիւնից)

Մարդիկ ինչպէս որ իրենց մարմնի կաղմուածքով զանազանուում են միւնեանցից, այնպէս էլ հսկեկան յատկութիւններով են տարբերուում։ Մէկի գիտութիւնը հաւասար չէ միւսի գիտցածին։ մէկի ըմբռնելու ընդունակութիւնը աւելի մեծ է ու այլ կերպ քան միւսինը։ Մարդկանց զգացմունքներն էլ միւնեանցից շուտ տարբեր են։ մէկը հակումն ունի զգացմունքների խիստ բռնկման, միւսն աւելի թոյլ, մէկի զգացմանց բռնկումները շուտ են անցնում, միւսինն աւելի դանդաղ։ Որբան էլ այդ տարբերութիւնները մեծ լինին, այնու ամենայնիւ կարելի է, (ինչպէս որ վաղուց արդէն նկատուել է,) բոլոր զգացմունքները մի քանի որոշ տիպերի վերածել, որոնց տրուում է խառնուածք կամ տեմպերամէնտ կոչումը։ Եւ որովհետև յոյզերն երբեմն արագ, երբեմն դանդաղ ընթացք են ունենուում, երբեմն ուժեղ, երբեմն թոյլ են լինում, այդ պատճառով էլ չորս տեսակ խառնուածք (Temperament) են որոշել։ ա. մաղծային՝ ուժեղ, բայց արագ անցնող յոյզերով, բ. արինաշատ՝ թոյլ, բայց նոյնպէս արագ անցնող յոյզերով, գ. սեւամաղծոտ՝ ուժեղ, բայց դանդաղ անցնող յոյզերով և դ. մաղծային՝ թոյլ և դանդաղ անցնող յոյզերով։ թէև այս տարբերութիւնները այժմ այլ ևս առաջուայ նման ընդհանուուր ընդունելութիւն չեն զըտնուածքութեան մէջ, բայց և այնպէս զաղափարներն այսօր էլ գործ են ածուում ոչ միայն ժողովրդի, այլ նոյն իսկ առաջնակարգ գիտնականների կողմից։

Խառնուածքի վերոյիշեալ չորս անունները թէև շատ հին են, բայց միշտ միւնոյն նշանակութիւնը չունին։ Մինչդեռ տյսօր խառնուածք բառը միւսիայն յոյզերի արամադրութիւնն է արտայայտում, սկզբում ծառայում էր իբրև արտայայտիչ մարմնի ուղու յատկութիւնների։ Հին բժիշկներն ընդունուած էին կաղմուածքի չորս գլխաւոր հիւթեր, գեղին մաղձ, արին, աղ

մազձ, մաղաս) և մարդու խառնուածք էին անուանում, երբ այս հիւթերից մէկը գերակառած էր միւս հիւթերի յարաբերական խառնուածքի մէջ: Նրանց ենթագրութեամբ՝ մաղծային խառնուածքի մէջ գերակշռող դեր էր խաղում դեղին մաղձը, արինեաշատ խառնուածքըում՝ արինը, սեւամաղծոտ խառնուածքում՝ սև մաղձը, մաղասային խառնուածքում՝ մաղասը: Հները թէև միենոյն ժամանակ ընդունում էին, որ այս հիւթերի խառնուարքներն ազգեցութիւն ունին նաև հոգեկան յատկութիւնների վրայ, սակայն չորս խառնուածքների ճիշտորոշումներն, այժմիհան մտքով, վերջն ընդհանրացան-չորս հիւթերի տեսութիւնը մերժելուց յետոյ:

Խառնուածքը իւրաքանչիւր անհատի կեանքի վրայ տարբեր ազգեցութիւն է ունինում, որովհիտեւ արտաքին տպաւորութիւնների ներգործութիւնը զգացմունքի վրայ՝ մեծ մասմբ կախումն ունի խառնուածքից: Սակայն այստեղ միմիայն անհաճոյ տպաւորութիւնների հակազդեցութիւնը չէ գեր խացողը, Մաղձային խառնուածքի վրայ զօրեղ ազգեցութիւն ունին ինչպէս հաճելի, նոյնպէս և անհաճոյ տպաւորութիւնները: Մաղձաւոյդը հեշտութեամբ է բարկանում, բայց ընդունակ է նոյնպէս ոգեւորուելու, առհասարակ նա շուտով զոհ է գնում որևէ կրքի, որ կարող է նրան թէ ամենաազնիւ գործն անել տալ և թէ ուրիշ մարդկանց համար վտանգաւոր ձեռնարկութեան դրդել: Մաղձայոյդ են այն մարդկանցից շատերը, որոնք իրենց անձնաւորութեան կամ բարեկամների ու ազգականների վիրաւորուած պատիւը վերականգնելու համար՝ ինքնօքնութեան են դիմում: Մաղձայոյդը մեծ հուանդով է մի նոր գործ սկսում, բայց նոյն հուանդը մինչև գործի վերջը չէ շարունակում:

Այդպէս չէ արիւնաշատը, որի վերայ հեշտութեամբ ազդում են կեանքի փոփոխութիւնները, սակայն այդ ազգեցութիւնները ոչ շատ զօրեղ են և ոչ էլ երկարատև: Այս է պատճառը, որ թէև արիւնաշատը փոքրիկ գժկամակութիւններին հեշտութեամբ է դիմալըրում, բայց անընդունակ է մեծ ոգեւորութիւն առաջացնող մի գործ անելու եւ որովհեատև նրա յուղը թոյլ է, ընդհանրապէս ընդունուած է, որ նա կեանքի լուրջ ինդիրները վճռելու շատ քիչ ընդունակութիւն ունի, մանաւանդ որ փոքր անյաշողութիւնները նրան շատ շուտ են վիճակնում: Արիւնաշատը համարւում է իրեն լաւ ընկերական կեանք վարող մարդ, բայց և իրեն անխստահելի պարտապան, որովհեատև նա վայրկենական տրամադրութեան տակ

խոստանում է մի բան, որ յետոյ չէ կատարում:

Սևամաղձոտ խառնուածքը ամեն բանի վրայ ծանր աշբով է նայում և այդ պատճառով յաճախ տիսուր ու վշտալի է լինում: Բայց միւս կողմից ընդունակ է ազնիւ զգացմունքներ ըմբռնելու, օրինակ սէր և բարեկամութիւն:

Վերջապէս մաղասոտը թէև իւր խառնուածքով պաշտպանուած է շատ անհաճոյ մտքերից, բայց միենոյն ժամանակ զրկուած է կեանքի բազմաթիւ հաճոյքներից: Այս պատճառով բոլորովին սխալ կիմի մաղասային խառնուածքին առաւելութիւն տալը, մաղասոտի սրտի անդորրութեան երջանկութիւնը շատ սահմանափակ է: Եթէ մաղասոտը մի կողմից պաշտպանուած է կատաղի կերպով բռնկող բարկութիւնից, միւս կողմից էլ թողնում է, որ անօգուտ անհնին յաջողութեամբ գործելու շատ առիթներ: (Կանտը գովել է մաղասային խառնուածքը. «Մաղասոտի բաղդաւոր խառնուածքը իմաստութեան տեղն է բռնում, մաղասոտը հեզահամբոյր ամուսին է և կարողանում է իւր կնոջ ու ազգականների վրայ իշխանութիւն ձեռք բերել») Բայց միենոյն ժամանակ չպէտքէ մոռանալ, որ մաղասոտը միայն այն ժամանակն է այդ առաւելութիւններն ունենում, երբ բաւականաչափ մարդաճանաչութիւն և խոհականութիւն ունի: Եերբեմն մաղասոտը հոգեպէս բթամիտ է և այդ դէպում հազիւ թէ նա ուրիշ մարդկանցից լաւ լինի:

Թէև նորագոյն ժամանակներում փորձել են կրկին վերականգնել հին հիւթերի տեսութիւնը, հարկաւ փոփոխուած ձեռվ, —այս տեսութեամբ մաղասոտի արեան կարմիր մարմնիկները դանդաղութեամբ են թթուածին տալիս, որից և առաջանում է արեան կարմիր գոյնը. սևամաղձոտի արեան մարմնիկները արագութեամբ են թթուածին տալիս և այդ պատճառով արիւն աւելի մուգ է երևում, ինչպէս մէ մաղձը—բայց այսօր այդ տեսութիւնը կարելի է մերժուած համարել: Աւելի ճիշտ կլինէր, եթէ խառնուածքի հիմքը որոնէինք նեարդային համակարգութեան, մանաւանդ ուղեղի; մի որոշ գրութեան մէջ:

Արդէն փորձել են գտնել նեարդային համակարգութեան այն մասնակի զրութիւնը, որի վրայ հիմնուում է որոշ խառնուածքը, բայց ինդիրը տեսութեան (թէօրիայի) շրջանից գուրս չէ եկել Առաջուայ ընդունուած այն կարծիքը, թէ խառնուածքը կախումն ունի ուղեղի մեծութիւնից և թէ՝ փոքր ուղեղը մաղասային և սևամաղձոտ խառնուածք է արամագրում, իսկ մեծ ուղեղը՝ մաղձային և արիւնաշատ, կարելի է սխալ համարել: Կարծւում էր նոյնպէս՝ թէ խառնուածքները

տարբերում են այն արագութեամբ, որով անհատը հակազդեցութիւն է ունենում զգայարաններից ստացած տպաւորութիւնների վրայ: Ենթադրում էին, թէ մաղասային խառնուածքը ունեցող անհատի հակազդեցութիւնը զգայարաններից ստացած տպաւորութիւնների վերայ՝ աւելի դանդաղ է տեղի ունենում, քան ուրիշ խառնուածքը ունեցողներինը: Բայց այս ենթադրութիւնն էլ չճշտուեց. Հնայելով թոյլ յոյզերին, մաղասոտը նոյնպէս արագ է զգում, ինչպէս և ուրիշը: Խառնուածքների տարբերութիւնը նոյնպէս չէ առաջանում զգայութեան գործարաններից, որոնք մաղասային խառնուածքի դէպքում աւելի բութ չեն, քան մաղձայոյդ անհատինը: Հէնչէն, որ խառնուածքների խնդիրը մանրամասն հետազօտեց, խառնուածքների տարբերութեան հիմքը համարեց այն, ինչ որ ինքն անուանում էր նեարդային համակարգութեան *tonus*: Եթէ մենք կարծում ենք, որ մեր գործարանները կատարեալ հանգստութիւն են վայելում, յաճախ սխալում ենք: Ինչպէս որ ընած մարդու բոլոր մկանները լիովին չեն թմրում, այլ մի որոշ գործունէութիւն են ունենում շարունակ, այնպէս էլ, ասում է Հէնչէն, հանգստութեան միջոցին գոյութիւն ունի նեարդային համակարգութեան մի անփոփոխ գրգուած դրութիւն, որ լուս է կոչում, այս լուս-ը զանազան մարդկանց մէջ տարբեր է և սրա վրայ է հիմնում խառնուածքը:

Եւ որովհետև այս յարատես գրգուած գրութիւնը իւրաքանչիւր անհատի մէջ տարբեր է, ուրիշն պարզ է որ մարդկանց խառնուածքներն էլ տարբերում են միմեանցից. մէկը նոյն տպաւորութեան միջոցին աւելի ուժեղ հակազդեցութիւն է ունենում, միւրը՝ թոյլ, մէկի համար ազդեցութիւնն արագ է անցնում, միւսի համար աւելի դանդաղ:

Հնդհանրապէս ընդունւում է, որ իւրաքանչիւր անհատի խառնուածքի հիմնական տիպը պահպանում է կեանքի մէջ: Մաղձուած երբէք սկամաղձու չի դառնայ, արինաշատը երբէք մաղասային և այն: Խառնուածքի անփոփոխելիութեան պատճառը համարում էր այն հանգամանքը, որ նեարդային համակարգութեան մասնակի գրութիւնը, որի վրայ է հիմնում խառնուածքը, ընածին է մարդու համար: Իրեւ հաստատութիւն այս ճշմարտութեան՝ առանձնապէս շեշտուում է, որ արինակիցները յաճախ աչքի ընկնելու չափ միանման խառնուածք են ունենում: Եւ իսկապէս վերջին հանգամանքը յաշճախ է պատահում. կան ամբողջ ընտանիքներ, որտեղ համարեա ամենքը մաղասային խառնուածքը ունին, մինչդեռ ու-

ըիշ ընտանիքներում աւելի յաճախ է կրկնուում մաղձայիշնը։ Նոյնպէս և այն հանգամանքը, որ տարբեր սեռերը տարբեր խառնուածք ունին, ընդունուեց իբրև ապացուց, որ խառնուածքը կախումն ունի կազմուածքի բնածին յատկութիւններից։ (Անցողակի նկատենք, որ արդէն հին յոյները ընդունուելին արական և իգական սեռի խառնուածքի տարբերութիւնը, սակայն գլխաւորապէս հիմնուում էին կովի ու եղանակի համի տարբերութեան վրայ)։ Նմանապէս և այն իրողութիւնը, որ շատ ցեղեր մի որոշ խառնուածք են ունենուամ—օրենակ հարաւային ցեղերն աւելի հակումն ունին լոյզերի ուժեղ բռնկման, քան հիւսիսայինները— համարում է իբրև փաստ, որ խառնուածքը բնածին է։ Սակայն անհատի խառնուածքի բացարձակ անփոփխելի լինին առանց այլեալլութեան չի կարելի ընդունել։ Ումանք էլ այնքան հեռու են գնուա, որ հասակի տարբեր աստանների համար՝ տարբեր խառնուածք են ընդունում։ մանկութիւնը հակուում է դէպի արենաշատ խառնուածքը, երիտասարդը՝ դէպի սեամաղձուութիւնը, այրական հասակում իշխուա է աւելի մաղաճային խառնուածքը, մինչդեռ ծերութեան հասակը նպաստում է մաղասայնութեան։ Յամենայն դէպս խառնուածքը յաճախ բարեխառնուում է դաստիարակութեան և կեանքի ազդեցութիւնների շնորհիւ։ սակայն պէտքէ ինկատի ունենալ, որ այս չորս խառնուածքները անխառն կերպով շատ հազիւ են պատահուան։ Մինչև անգամ այն կարծիքն է յայտնուել, թէ խառնուածքը կախումն ունի կերակրների տեսակից, թէ օրինակի համար խոտանարակները (վէկէտարիանները) և ոգելից խմիչքներ չգործածողները բուռն կըքերի բռնկումից ազատ են լինուած։ Այն ինչ հոգեբան Հալլէրը հաստատում էր, որ երբ ինքը միս և գինի չէր ճաշակուա երկար ժամանակ, իւր խառնուածքը փոփոխութեան չէր ենթարկուում։

Երբեմն հիւանդութիւններն էլ մեծ ազդեցութիւն են ունենուամ խառնուածքի վրայ, երկարատկ զօրեղ յուզումների ազդեցութեամբ ումանք ունենուամ են նեարդային հասակարգութեան այն դիւրազգայութիւնը, որ իբրև հիւանդութիւն յայտնի է՝ նեարդաթուլութիւն անունով և որ յաճախ ընկերանուամ է մաղձային խառնուածքի հետ։ (Շատ դէպքերուա այս հիւանդու դիւրազգայութիւնը ծնողներից անցնուամ է զաւակներին՝ ժառանգաբարաւ Այս հիւանդութեան բնորոշ յատկութիւն է՝ յուզուելու մեծ հակումը։ անշան պատահումները, օրինակ ծառաների փոքրիկ սխալմունքը, նեարդաթուլութիւն ունեցող կնոջը սաստիկ բարկացնուամ են, ինչպէս և նոյն հիւանդութիւն ունեցող աղամարդը գրգռուում է

որևէ է գործի նոյն իսկ աննշան անյարմարութիւններից։ Շատ անդամ դիւրազգայութեան հակման հետ միաժամանակ անհատները ցոյց են տալիս ժամանակաւոր ինքնիշխանութիւն, որ բողարկում է նրանց իսկական խառնուածքը. օրինակ տանը ամեն մի չնչին բանից վրդովուող կինը հասրակութեան մէջ իրեն շատ լաւ է պահում և իշխում իւր զգացմունքների վրայ։ Տղամարդը, օրինակ սպան, որ իւր հրամանատարութեան տակ գտնուած զինուորների չնչին արարքներից սաստիկ բարկանուալու կատաղում է, իւր տանը ամենանեղ ամուսին է։ Երբեմն զգացմունքների բռնկման այս ճնշումը կամ ընկճումը հետևանք է լինում կեանքի վայրկենական գործողութեան։ Ուրիշ դէպ-քերումն է հարկաւ, ոյզերն իսկապէս այնպիսի փոփոխութեան են ենթարկում որ անկարելի է մի որոշ խառնուածք ընդունել. այսպիսի տատանումներն երբեմն համարեա պարբերական ընթացք են ստանում, և մի քանի շաբաթ մաղաձային խառնուածքն է իշխող հանդիսանում, յետոյ մի որոշ ժամանակ էլ սկամաղձութիւնն է գերակուում։

Շատ անդամ հարց է եղել՝ թէ ո՞ր խառնուածքին առաւելութիւն պէտքէ տալ. իւրաքանչիւր խառնուածք իւր տռաւելութիւններն ու թերութիւններն ունի. կեանքի իսկական արուեստն այն է, որ մարդ կարողանայ իւր կրքերի ու բնական ձգտումների վրայ այնպէս իշխել, որ ոչ թէ մի խառնուածք ունենայ, այլ բոլոր խառնուածքներն իւր մէջ միացնէ։ Նա պէտքէ արքիւնաշատ (սանգուինիկ) լինի՝ առօրեայ կեանքի փոքր վշտերի և ուրախութիւնների վերաբերմամբ, սկամաղձուա (մելան-խոլիկ) կեանքի նշանաւոր պատահարների ամենալուրջ ժամերին, մաղձային՝ (խօլերիկ) այն տպաւորութիւնների դէմ, որոնք նրա խորին հետաքրքրութիւնը կամ շահագրգութիւն (ինտերէս) են շարժում, մաղասային՝ (պֆլէզմատիկ) կայացրած վճիռների գործադրութեան վերաբերմամբ։

ԻՍԱՀԱԿ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ